«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝«Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում»

Դաստիարակ՝ Խաչատրյան Լիանա

Մանկապարտեզ՝ «Նոր Գեղիի Կ.Հ.Առաքելյանի անվան մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԸ ԵՎ ԾԵՍԵՐԸ 4
1.1 ՎԱՐԴԱՎԱՌ 5
1.2 ԱՄԱՆՈՐ 6
1.3 ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ 6
ԳԼՈՒԽ 2 8
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ 8
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 11
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքիս վերնագիրն է ՝ << Ազգային տոների , ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում>>: Ընտրել եմ այս թեման , քանի որ գտնում եմ , որ ներկայիս հասարակության համար ամենակարևոր խնդիրներից է ՝ ազգային նորմերի արժևորումը և դրանց փոխանցումը սերունդներին:

Հետազոտական աշխատանքիս նպատակն է ՝ ուսումնասիրել ազգային տոները,ծեսերը և դրանց կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում, դրանց օգտակարությունը երեխաների ազգային մտածելակերպի և արժեհամակարգի ձևավորման գործում:

Հայաստանում ՝ ազգային արժեքների ձևավորումը երեխաների մեջ ներառված է պետական կրթական չափորոշչում:

Պատմական զարգացման արդյունքում են ձևավորվում ազգային արժեքները , և դրանց նշանակությունը շատ է կարևորվում: Մեր օրերում երեխաների դաստիարակությանը նպաստում են տարբեր հանգամանքներ ՝ կրթական, ընտանեկան, մշակութային, ազգային, բարոյական և այլն:

Մանկավարժության մեջ խնդիր է հանդիսանում երեխաների ազգային գիտակցության ձևավորումը, սեփական ժողովրդի պատմության և մշակույթի հետ ծանոթացումը: Եվ այս ամենի գործում իր ուրույն տեղն ունի մանկավարժը : Մանկավարժի առաջ խնդիր է ծառացած երեխաներին փոխանցել մեր ժառանգած ազգային արժեքներն ու բարոյական նորմերը, որոնց շարքին են դասվում նաև ազգային տոները և ծեսերը :

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԸ ԵՎ ԾԵՍԵՐԸ

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ավանդույթներ, ծեսեր, տոներ: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները կզարգանային, կփոխվեին հասարակական փոփոխությունների հետ համաքայլ: Դրանք չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու:

21–րդ դարի սկզբին հայտնվել ենք մի տխուր փաստի առջև. մենք կորցրել ենք ազգային շատ կարևոր արժեքներ և փորձում ենք վերականգնել կորցրածը: Այս գործը պետք է սկսել վաղ հասակից, այսինքն՝ ծնված օրվանից: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում, հասարակության մեջ չի պահպանվել ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով մանկապարտեզից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը:

Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ո՞ր գործողություններն են, որ կարելի է կատարել կամ փոքր-ինչ ձևափոխել կամ լրացնել նորով: Ո՞ր պարագաներն են, որոնք շատ լավ կմտնեն ժամանակակից ծեսի մեջ կամ կստանան նոր ձև կամ էլ նորերը կլինեն: Սրանք այն հարցերն են, որոնք առաջ են գալիս և որոնք լուծելու խնդիր ունենք: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հիբրիտ՝ հնի ու նորի վատ սինթեզ: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր:Ծեսերը աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ , այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և սերնդե-

սերունդ են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերն ու ազգային առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի և կենցաղի վրա:

Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է ՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենի կրողը և ակտիվ փոխանցողը: Ազգային ծեսը այն միջավայրն է, որը մանկական ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող :

1.1 ՎԱՐԴԱՎԱՌ

Հայոց ավանդական տոնակարգում Վարդավառն ամառային ամենամեծ տոնն է՝ եկեղեցու հինգ տաղավար տոներից: Նախաքրիստոնեական շրջանից այն հայտնի է՝ որպես վարդամատն Աստղիկ դիցուհու տոն, Հայ առաքելական եկեղեցին այն տոնում է՝ որպես Քրիստոսի պայծառակերպության օր: Շարժական այս տոնը նշվում է 35 օրերի ընթացքում՝ հունիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ը: Տոնի հիմքում Թաբոր լեռան վրա Քրիստոսի պայծառակերպ երևումն է, որն, ըստ քրիստոնեական հավատալիքների, մաքրագործված-աստվածացած մարդու իրական կերպն է. Քրիստոսի պայծառափայլ կերպն անմեղ մարդու աստվածանման մաքրության այն գագաթն է, դեպի որը բարձրանում է մարդը հոգևոր սրբագործման առօրյա դժվարին ճանապարհով:

1.2 ԱՄԱՆՈՐ

Ամանոր (Կաղանդ, Նոր տարի), տոն, նշվում է տարբեր ժողովուրդների կողմից ընդունված օրացույցում ընթացիկ տարվա վերջին օրվա և հաջորդ տարվա առաջին օրվա գիշերը։ Նոր տարին նշելու սովորույթը գոյություն ուներ դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում՝Միջագետքում։

Ամանորով նշում են տարվա սկիզբը։ Տարին ժամանակի սահմանն է, որը վերցրած է բնությունից։ Դա այն ժամանակաշրջանն է, որի ընթացքում Երկիր մոլորակը կատարում է մի լրիվ պտույտ Արեգակի շուրջը։ Երկրի կատարած շրջապտույտը հավասար է 934 միլիոն կիլոմետրի, որն անցնում է մեծ արագությամբ։

Հունվարի 1-ը՝ որպես տարվա սկիզբ, սահմանվել է Հռոմի կայսր Հուլիոս Կեսարի կողմից մ.թ.ա. 46 թվականին։ Հին Հռոմում այդ օրը նվիրված էր Յանուսին՝ ընտրության, դռների և բոլոր սկզիբների աստծուն։ Հունվար ամիսն իր անվանումը ստացել է հենց Յանուս աստծու անունից, որին պատկերում էին երկու երեսով, որոնցից մեկը նայում էր առաջ, իսկ մյուսը՝ ետ։

1.3 ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ

Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը եկեղեցու գլխավոր տոներից է։ Հայոց տոների շարքում Զատիկը բնության զարթոնքը խորհրդանշող ամենամեծ ու

ամենասպասված տոնն է: Այն շարժվում է 35 օրերի միջև՝ մարտի 22 -ից մինչև ապրիլի 25 -ը: Զատիկ բառին տրվում են տարբեր ստուգաբանություններ: Տոնի առաջին և ամենամեծ խորհուրդը բնության զարթոնքի, տարվա եղանակների զատվելու, որոշվելու, բաժանվելու գաղափարն է: Զատվել բառն այստեղ խորհրդանշում է ոչ միայն տարվա եղանակների զատումը, այլ նաև բնության գույների զատումը, բաժանումն ու տարբերակումը համընդհանուր գորշությունից, միապաղաղությունից: Հարություն առած բնությունը զարդարվում է կանաչով, ծառ ու ծաղկով, հողը ծածկվում է գույներով, ծաղկում են ծիրանենիները, խնձորենիները, տանձենիները, դեղձենիները... Հարության տոնի հետ միաժամանակ վերադառնում են չվող թռչունները՝ արագիլը, ծիծեռնակն ու սարյակը: Զատիկ բառի մյուս մեկնաբանությունը ազատվել իմաստն ունի: Բացի վերոհիշյալ խորհրդից, այսինքն՝ ձմռան երկար թագավորությունից բնության ազատվելուց, այն նշանակել է նաև Մեծ Պասը ավարտելու, դրա խստություններից ազատվելու իմաստը, երբ մարդիկ քառասնօրյա պասով մաքրագործելով հոգին ու մարմինը, վերջապես իրավունք են ստանում օգտվելու երկար սպասված, կենդանական ծագում ունեցող կերակուրներից: Այդ է պատճառը, որ գրպաններում մի-մի ձու դրած, նրանք գնում էին ժամերգության և ավարտվելուց անմիջապես հետո, ուտում ձուն:

ԳԼՈՒԽ 2

ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

Թեման- <<Հացթխիկի ծես>>

Պարապմունք- Խոսքի զարգացում

Խումբը-Միջին խումբ

Տևողությունը-25-30 րոպե

Նպատակը

- Առաջացնել հետաքրքրություն ծեսի մասին:
- Հարստացնել բառապաշարը՝ ցորեն, հացատուն, թոնիր, խմոր, հացթուխ, ալյուր:
- Զարգացնել միմյանց լսելու և հարցեր տալու հմտությունները:

Անհրաժեշտ նյութեր

Հրաշալի պարկ, ալյուր, ցորենի հասկ, ցորեն, նկարներ,:

Մեթոդ-«Հրաշալի պարկ», փոքր խմբերով, մեծ խմբերով և զույգերով աշխատանք:

Ընթացքը

Խթանման փուլ

Երեխաներին հայտնել այն մասին, որ մեզ հյուր է եկել փերին և իր հետ բերել է հրաշալի պարկ: Պարապմունքը սկսել՝ «Հրաշալի պարկ» խաղով: Պարկի մեջ դնել թեմային համապատասխան պարագաներ (ցորենի հասկ, ալյուր, ցորեն, գրտնակ և այլն):

Իմաստի ընկալման փուլ

- Հացն ինչի՞ համար է:
- Ի՞նչ կլինի, եթե հաց չլինի: (Երեխաները զույգերով քննարկում են և պատասխանում են հարցերին, յուրաքանչյուր հարցից հետո պատասխանում է 2-3 երեխա):

Ապա երեխաներին բաժանել 4 խմբի , յուրաքանչյուր խմբի դիմաց դնել նկարների շարք: Երեխաները պետք է դասավորեն նկարները ըստ հերթականության: Ապա սկսել քննարկումը:

I խումբ - Կխոսեն գարնանը կատարվող աշխատանքների, գյուղատնտեսական գործիքների մասին:

II խումբ - ցորենի հունձքի, դրա մասնակիցների մասին: Հատիկները ինչերի մեջ են լցնում, ուր են տանում:

III խումբ - Ցորենից հաց ստանալու մասին: Ցորենը ալյուրաղաց են տանում, ապա դարձնում են ալյուր, լցնում պարկերը, բեռնատարներով տեղափոխում են հացի արտադրամաս: Պատրաստում են խմոր, հունցում, ջեռոցում թխում և ստանում հաց:

IV խումբ - Ալյուրից ինչե՞ր են պատրաստում: Ինչի՞ մեջ է օգտագործվում:

Խմբի անդամները սկզբից դնում են հացթուխի, ապա հացատեսակների, այնուհետև հացի նկարները, իսկ ամենավերջում հացի խանութի նկարը, որտեղ էլ հենց այն վաճառվում է: Յուրաքանչյուրը ներկայցնում են իրենց նկարների շարքը `մեկը մյուսին լրացնելով:

Տալ զույգերով աշխատանք

- Մտածի՛ր, թե որ խմբի ներկայացրած հատվածը քեզ դուր եկավ և ինչու՞: (Երեխաները փոխանակվում են մտքերով, հարցին պատասխանում են 3-4 հոգի):

Ֆիզկուլտդադար

Աշխուժացնող խաղ «Քաղցր հաց»

Այսօր Մարիայի տոնն է,

Նրա ուրախ օրն է:

Պատրաստել ենք քաղցր հաց,

Այսպիսի բարձրությամբ,

Այսպիսի ցածրությամբ,

Այսպիսի լայնությամբ,

Այսպիսի նեղությամբ:

Քա'ղցր հաց, քա'ղցր հաց,

Ում որ ուզես, նրան տաս:

Կշռադատման փուլ

- Ի՞նչ աշխատանքներ կատարեցինք այսօր։
- Ի՞նչ նոր բան սովորեցինք։
- Ձեզ ի՞նչ դուր եկավ և ի՞նչ դուր չեկավ։
- Մի բան, որ ինձ դուր եկավ այս պատմությունից և կպատմեմ տանը։

Պարապմունքն ավարտել հացի մասին երգով և փոքրիկ հացի պատրաստմամբ։

Հ.գ. - Գտնվում եմ արձակուրդում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ՝ պատմամշակութային արժեքների փոխանցման գործում մեծ դեր և նշանակություն ունեն ազգային տոները և ծեսերը։ Ծեսերի և տոների իրականացումը մանկապարտեզում նպատակ ունի երեխաներին փոխանցել մշակութային ժառանգության բազմաշերտ արժեքները՝ նպաստելով երեխաների հայեցի դաստիարակությանը և իրական արժեքների ձևավորմանը։ Ծեսը այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական փուլում և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները և գիտելիքները։

Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը անհատի ձևավորման և ներդաշնակ զարգացման առումով պարունակում է հսկայական ներուժ և դրա ուսուցումը նախադպրոցական տարիքի երեխաների միջավայրում ազգային մշակույթի յուրացման հիմնական միջոցներից է և անմիջականորեն առնչվում է մտավոր, բարոյական և գեղագիտական դաստիարակության խնդիրներին։

Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների զարգացումը բազմակողմանի է ,և, որ ազգային ոգով դաստիարակման և զարգացման հետ զուգընթաց զարգանում են նաև երեխաների խոսքը, մտածողությունը, երևակայությունը, տրամաբանությունը, զգայական և իմացական ոլորտները։

Արդի հասարակության մեջ շատ կարևոր է և միաժամանկա անհրաժեշտ է ազգային արժեքների և մշակույթի պահպանումը և դրանց սերնդե-սերունդ փոխանցումը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Սարգսյան-Ազգային տոներ

2. Ռ. Ռստկյան-Հայկական ծեսեր

3. wikipedia.org